



Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2014թվականի ապրիլի 17-ին

Վանաձոր քաղաքում

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱՎՈՐ	Ն.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ	Ա.ՄԱՅԱԿՅԱՆԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝	
ՀԱՅՑՎՈՐ	Կ.ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

Դոնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Կարինե Արարատի Ստեփանյանի /անձնագիր AC 0609300, տրված 24.02.1999թվականին, 018-ի կողմից/ ընդդեմ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետ Ա. Նալբանդյանի՝ որոշումն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ժամանակաշրջանի համար միջին աշխատավարձ բռնագանձելու պահանջների մասին.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Կարինե Արարատի Ստեփանյանը 24.10.2013թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետ Ա. Նալբանդյանի՝ որոշումը վերացնելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ժամանակաշրջանի համար միջին աշխատավարձ բռնագանձելու պահանջի մասին:

Դատարանի 28.10.2013 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և նշանակվել քննության:

Պատասխանող Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանը 22.11.2013 թվականին ներկայացրել է հայցադիմումի պատասխան:

10.12.2013թվականին պատասխանողը ներկայացրել է դիմում և խնդրել վեճը լուծել ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա՝ իր ներկայացուցչի բացակայությամբ:

22.01.2014թվականին հայցվոր Կարինե Արարատի Ստեփանյանը ներկայացրել է հայցադիմումի լրացում:

Դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118 հոդվածով, գործը քննել է պատասխանողի բացակայությամբ:

02.04.2014թվականին ավարտվել է գործի քննությունը և 17.04.2014թվականին հայտարարվել վճռի հրապարակման օրը: